


ՎԵՐԺԻՆԵ ՍՎԱԶԼՅԱՆ, Ամերիկահայոց բանավոր ավանդույթը ժամանակի հոլովոյթում, խմբ.՝ Ս. Հարությունյան, անգլ. թարգմ.՝ Տ. Ծովիկյան, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Ե., «Գիտություն» հրատ., 2021, 904 էջ, DVD+քարտեզ:



Ընթերցողի սեղանին է դրվել մի չափազանց արժեքավոր աշխատություն՝ հայագիտության խոշոր երախտավոր, բանագետ, բանահավաք, ցեղասպանագետ, ՀՀ գիտության վաստակավոր գործիչ, բ.գ.դ. Վերժինե Սվազլյանի հեղինակությամբ: «Ամերիկահայ բանավոր ավանդույթը ժամանակի հոլովոյթում» գիրքը լույս է տեսել ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ: Խմբագիրն է վաստակաշատ բանագետ Սարգիս Հարությունյանը: Այն համալրում է Վ. Սվազլյանի ցեղասպանագիտական և բանագիտական բարձրարժեք աշխատությունների շարքը:

Աշխատությունն առաջին ամբողջական փորձն է՝ ներկայացնելու հայկական սփյուռքի խոշորագույն համայնքներից մեկի՝ ամերիկահայերի բանավոր ավանդույթը: Սխալ կլինի այն սոսկ ժողովրդական նյութերի ժողովածու անվանելը (թեև գրքի առյուծի բաժինը Վերժինե Սվազլյանի, մասամբ նաև Քնարիկ Ավագյանի՝ ամերիկահայ բանասացներից գրառած բանավոր պատմություններն են, բանահյուսական և ազգագրական նյութերը): Ըստ էության, աշխատանքը հետազոտական բնույթ ունի. երեք բաժիններից մեկը գրառված նյութերի բավական ընդարձակ ուսումնասիրություն է, որը լույս է տեսել կից անգլերեն թարգմանությամբ՝ դիտարկելով օտարալեզու ընթերցողին ներկայանալու գործը, երկրորդ մասն ամբողջապես ամերիկահայերից գրառված ժողովրդական բնագրերն են՝ գիտականորեն դասակարգված ըստ տեսակների և ժանրերի, իսկ երրորդ մասում այս սկզբնաղբյուրների փաստագրական-տեղեկատվական ցուցիչներն են:

Հետազոտական հարուստ հարցադրումներ են արված գրքի առաջին բաժնում՝ «Պատմաբանագիտական ուսումնասիրություն» վերնագրով, որի չորս մասերում, հիմնվելով պատմական տեղեկությունների և գրառված հսկայածավալ նյութի հետազոտությունից ստացված տվյալների վրա, շարադրվում է ամերիկահայ համայնքի պատմությունը, ներկայացվում են բանասացները, նրանց ան-

ցած ուղին և գրառված նյութերը: 206 բանասացների սեռատարիքային խմբերի համեմատական վերլուծությունը և նրանցից գրառված 1165 միավոր նյութի քննությունը քանակական մեթոդով թույլ են տալիս ուրվագծել ամերիկահայ բանավոր ավանդույթի կրած փոփոխությունները ժամանակի ընթացքում: Այս առումով շատ խոսուն է գրքի վերնագիրը, քանի որ կուտակված ժողովրդական նյութերը գրի են առնվել տարբեր տարիներին Ամերիկա կատարած հինգ ուղևորությունների ընթացքում՝ 1979, 1990, 2001, 2004, 2008 թթ.: Հետևաբար այսպիսի ընդհատումներով գրառված նյութերի համադրումը բանագետին թույլ է տվել հետևել ամերիկահայերի բանավոր ավանդության քանակական և որակական փոփոխությունների գործընթացին **Ժամանակի հոլովոյթում**: Գրառված ժողովրդական նյութերի ժանրային, թեմատիկ և գաղափարական առանձնահատկությունների քննությամբ Վ. Սվազլյանը ցույց է տալիս այդ բանավոր ավանդության աստիճանական ձևափոխումը, օտար ազդեցությունների ենթարկվելն ու ուժացման ցավալի գործընթացը:

Աշխատանքի երկրորդ գլուխն ուշագրավ ենթաբաժիններով է ներկայացվում: Գրառված և կուտակված ողջ նյութը Վ. Սվազլյանն անվանում է «Սկզբնաղբյուրներ»՝ առանձնացնելով պատմական, բանահյուսական և ազգագրական սկզբնաղբյուրների բաժինները, ինչպես նաև երգերի նոտագրությունները (նոտագրողներ՝ Ալինա Փահլանյան, Մանուկ Մանուկյան, Կարո Չալիկյան): Առաջին բաժինն ընդգրկում է Հայոց ցեղասպանության վերաբերյալ ամերիկահայ բանասացների անձնական և ընտանեկան հուշապատումներն ու վկայություններն ամփոփող փաստավավերագրական հսկայական նյութ, որ ներկայացնում է հետեղեռնյան ողբերգական շրջանում Ամերիկա գաղթելու և այդ ճանապարհին կրած փորձությունների ծանր պատմությունները: Պատմական այս սկզբնաղբյուրներն արվում են որոշակի դասակարգմամբ՝ ականատես վերապրողների հուշ-վկայությունների, զրույց-վկայությունների և ուղղակի ժամանակակիցների հարցազրույցների առանձին բաժիններով:

Բավական հարուստ ժանրային ստորաբաժանումներով է տրված բանահյուսական սկզբնաղբյուրների մասը: Վիպական բանահյուսությունն ընդգրկում է ավանդազրույցներ, հեքիաթներ, առակներ, կենդանական, բարոյախրատական, պատմական, կենցաղային և զավեշտական զրույցներ: Ավանդական սյուժեների կողքին վիպական բանահյուսության այս ժանրերում առկա են նաև նոր միջավայրի ազդեցությամբ ստեղծվածները, որտեղ գեղարվեստական արտացոլում են ստացել Ամերիկայում հայի առջև ծառացած խնդիրները, դրանց շուրջ մտորումները կամ երգիծանքի լեզվով քննադատությունը:

Քնարական բանահյուսության բաժինն սկսվում է պատմական երգերով, որոնք բանահյուսական արտահայտությունն են վկայություններում տեղ գտած

ցավոտ խնդիրների: Երգ-վկայությունները, որբի և որբանոցի երգերը, ինքնապաշտպանական հերոսամարտերի երգերը, հայրենագրկումի, պանդխտության, պահանջատիրության, հայրենադարձության երգերի բնագրերն արտացոլում են եղեռնի և դրան հաջորդող տարիների պատմական իրադարձությունները, ցեղասպանության անդառնալի հետևանքներն ու այդ հետևանքները հաղթահարելու հուսահատ և համառ փորձերը եղեռնից մազապուրծ հայության կողմից: Քնարական բանահյուսության մյուս բաժնում ներկայացված են ամերիկահայ կյանքի երգերը, որտեղ ավանդական ժողովրդական խաղիկների, սիրո և ուրախության, կենցաղի և խնջույքի («քեֆ-թայմ») երգային բնագրերում հայտնվում են նոր կյանքին ու միջավայրին բնորոշ՝ հայրենիքից հարսնացու գտնելու դժվարության, դուլարի գերիշխող ազդեցության, ժամանակակից բարքերը երգիծելու մոտիվներ: Երգերն աստիճանաբար դառնում են պարզունակ՝ կորցնելով իրենց հարուստ խորհրդաբանությունը. երգարվեստը սկսում է կրել ամերիկյան ռեպի ազդեցությունը՝ լեցուն օտար արտահայտություններով (էջ 132): Այնուամենայնիվ, գերիշխող է մնում հայրենիքի սիրո և կարոտի թեման, որ դրսևորվում է, Վ. Սվազյանի բնութագրմամբ, «ազգահավաքի և հայրենաշինության երգերում»:

Ուշագրավ բաժիններից է ասույթային բանահյուսությանը նվիրված հատվածը: Ավանդական առած-ասացվածքների կողքին Վ. Սվազյանը ներկայացնում է երկու այլ ուշագրավ բաժիններ՝ «Խրատներ» և «Իմաստուն մտքեր», որոնցում ամերիկահայերը խտացնում են իրենց նոր կյանքից ստացած տպավորությունները, ավանդական հոգևոր արժեքների կորստի վտանգը դրամի զորությունը արժևորող նոր հասարակության մեջ, հայի տեսակը պահպանելու կարևորության գիտակցությունը: Օտարման և ուժացման ցավալի գործընթացը տեսանելի է դառնում փոխառություններում, անգլերեն արտահայտությունների՝ հայկական խոսք ներթափանցումներում, ինչպես նաև գրքի փոքրածավալ, բայց խոսուն բաժնում՝ նվիրված տոնածիսական մշակույթին, որտեղ արդեն իսկ ներմուծվում են օտար տոներ՝ Վալենտինը, Հելոուինը, Գոհաբանության տոնը:

Եղեռն վերապրած մի ամբողջ սերնդի և այդ սերնդի շառավիղների հոգևոր մաքառման պատմությունն է շարադրում այս գիրքը՝ ամերիկյան տարաբնույթ մշակույթների հորձանուտում սեփական մշակույթը պահպանելու, չլուծանալու, չկորչելու: Եվ, սակայն, նյութերի ժամանակագրական վերլուծությունը ցավալիորեն արձանագրում է այս ուժացման գործընթացը:

Գրքի արժեքը զգալիորեն մեծացնում են Համլետ Սարգսյանի ջանքերով կազմված քարտեզը, որն արտացոլում է հայերի տեղաբաշխումը Ամերիկայի Միացյալ Նահանգներում, հարուստ և ընդարձակ բառարանը, բանասացների վերաբերյալ մանրամասն տվյալներն ու լուսանկարները, ինչպես նաև ամերիկահայ շրջանում տարածված ժողովրդական երգերի ձայնասկավառակը:

Աշխատությունն ընդգրկում է Վերժինե Սվազլանի 40 տարիների տքնաջան աշխատանքը: Արժանին հատուցենք Մեծ հային և հայրենասերին, որն իր ամբողջ կյանքն ի սպաս է դրել հայ ժողովրդի հետեղեռնյան շրջանի ցավոտ պատմությունների և աստանդական դարձած և սփյուռքացված արևմտահայ մի սովոր զանգվածի բանավոր ավանդության գրառման, հետազոտման ու պահպանման կենսական կարևորություն ունեցող գործին:

Գիրքը կարող է օգտակար լինել բանագետների, պատմաբանների, սփյուռքագետների և հայագիտությամբ հետաքրքրվող ընթերցող լայն շրջանակների համար:

ՆՎԱՐԴ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու